



Համարը
Տիպը Համաձայնագիր
Սկզբնաղբյուրը ՀՀԱԳՆՊՏ 2017.07.26/1(38)

Տեսակը Հիմնական
Կարգավիճակը Գործում է
Ընդունման վայրը Բուենոս Այրես

Ընդունող մարմինը Հայաստանի Հանրապետություն
Ստորագրող մարմինը
Վավերացնող մարմինը
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 28.04.2017

Ընդունման ամսաթիվը 07.07.2014
Ստորագրման ամսաթիվը 07.07.2014
Վավերացման ամսաթիվը
Ուժը կորցնելու ամսաթիվը

ՀԱՄԱՉԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԳԵՆՏԻՆԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՐԳԵՐՈՒՄ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ
ՄԱՍԻՆ

Հ Ա Մ Ա Չ Ա Յ Ն Ա Գ Ի Ր

Հայաստանի Հանրապետության կառավարության և Արգենտինայի Հանրապետության կառավարության միջև հարկային հարցերում տեղեկատվության փոխանակման մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Արգենտինայի Հանրապետության կառավարությունը, այսուհետ՝ «Կողմեր»,

ցանկանալով համագործակցել հարկային հարցերում տեղեկատվության փոխանակման ոլորտում,

համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1 Սահմանումներ

- Սույն Համաձայնագրի նպատակների համար օգտագործվող եզրույթները նշանակում են.
 - «Կողմ» եզրույթը նշանակում է Հայաստանի Հանրապետության կառավարություն կամ Արգենտինայի Հանրապետության կառավարություն, ինչպես պահանջում է ենթատեքստը,
 - «Իրավասու մարմին» եզրույթը նշանակում է՝
 - Հայաստանի Հանրապետության կողմից՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը,
 - Արգենտինայի Հանրապետության կողմից՝ Արգենտինայի Հանրապետության պետական եկամուտների դաշնային ծառայությունը:
 - «Անձ» եզրույթը նշանակում է ֆիզիկական անձ կամ մարդկանց խումբ,
 - «Ընկերություն» եզրույթը նշանակում է ցանկացած իրավաբանական անձ կամ ցանկացած այլ միավոր, որը հարկման նպատակներով դիտարկվում է որպես իրավաբանական անձ,
 - «Հասարակական առևտրային կազմակերպություն» եզրույթը նշանակում է կազմակերպություն, որի արժեթղթերի հիմնական մասը ներառված է ճանաչված ֆոնդային բորսայում՝ պայմանով, որ վերջինիս նշած արժեթղթերը կարող են հեշտությամբ գնվել կամ վաճառվել հասարակության կողմից: Արժեթղթերը կարող են գնվել կամ վաճառվել «հասարակության կողմից», եթե արժեթղթերի գնումը կամ վաճառքը ենթադրաբար կամ բացահայտ սահմանափակված չէ ներդրողների սահմանափակ որևէ խմբով,
 - «Արժեթղթերի հիմնական մաս» եզրույթը նշանակում է արժեթղթերի տեսակ կամ տեսակներ, որն արտացոլում է ընկերության քվեարկության մասնակցելու իրավունքի մեծամասնությունը և ընկերության արժեքը,
 - «Ճանաչված ֆոնդային բորսա» եզրույթը նշանակում է ֆոնդային բորսա, որը ճանաչված է Կողմերի իրավասու մարմինների կողմից,

ը) «կոլեկտիվ ներդրումային ֆոնդ կամ ծրագիր» եզրույթը նշանակում է միավորված ներդրումային միջոց, անկախ իրավական ձևից: «Հանրային կոլեկտիվ ներդրումային ֆոնդ կամ ծրագիր» հասկացությունը նշանակում է կոլեկտիվ ներդրումային ֆոնդ կամ ծրագիր, եթե ֆոնդում և ծրագրում ներկայացված միավորները, արժեթղթերը կամ այլ տոկոսները կարող են հեշտությամբ գնվել կամ վաճառվել հասարակության կողմից: Ֆոնդում կամ ծրագրում միավորները, արժեթղթերը կամ տոկոսները կարող են հեշտությամբ գնվել, վաճառվել կամ հետգնվել հասարակության կողմից, եթե գնումը, վաճառքը կամ հետգնումը ենթադրաբար կամ բացահայտ սահմանափակված չեն ներդրողների սահմանափակ որևէ խմբով:

թ) «Հարկ» եզրույթը նշանակում է ցանկացած հարկ, որի նկատմամբ կիրառվում է սույն Համաձայնագիրը՝ վերջինիս 4-րդ հոդվածի համաձայն,

ժ) «Հարցող Կողմ» եզրույթը նշանակում է տեղեկատվություն հայցող,

ժա) «Հարցվող Կողմ» եզրույթը նշանակում է Կողմ, որից հայցվում է տեղեկատվության տրամադրումը,

ժբ) «տեղեկատվության հավաքագրման չափանիշներ» եզրույթը նշանակում է վարչարարական կամ դատական ընթացակարգեր և կանոններ, որոնք հնարավորություն են տալիս Կողմին ստանալ և տրամադրել հայցվող տեղեկատվությունը,

ժգ) «տեղեկատվություն» եզրույթը նշանակում է ցանկացած տեսակի փաստ, ծանուցում կամ գրանցում, որը կարևոր է սույն Համաձայնագրում ընդգրկված հարկերին առնչվող վարչարարության և դրանց կիրառման համար,

ժդ) «հարկային խախտումներ» եզրույթը նշանակում է հանցանքներ կամ իրավախախտումներ, որոնք իրականացվում են հարկային դաշտում, և որոնք Կողմերի պետությունների ներպետական օրենսդրությամբ համարվում են այդպիսին, անկախ այն հանգամանքից, թե դրանք նախատեսված են հարկային օրենքներով, քրեական օրենսգրքով, թե այլ իրավական ակտերով,

ժե) «քրեական օրենքներ» եզրույթը նշանակում է ներպետական օրենսդրության բոլոր քրեական նորմեր նախատեսող օրենքները, անկախ նրանից, թե դրանք նախատեսված են հարկային օրենքներով, քրեական օրենսգրքով, թե այլ իրավական ակտերով,

2. Ինչ վերաբերում է ցանկացած ժամանակ Կողմերից յուրաքանչյուրի կողմից սույն Համաձայնագրի կիրառմանը, ապա չսահմանված ցանկացած եզրույթ, եթե ենթատեքստը այլ բան չի պահանջում, կօգտագործվի այն նշանակությամբ, որը տվյալ ժամանակահատվածում սահմանված է այդ Կողմի պետության գործող օրենսդրությամբ, և այդ Կողմի կիրառվող հարկային օրենքներով սահմանված եզրույթը գերակայում է այդ Կողմի այլ օրենքներով սահմանված եզրույթների նկատմամբ:

Հոդված 2

Համաձայնագրի կարգավորման առարկան և գործողության ոլորտը

1. Սույն Համաձայնագրի դրույթների, միջազգային իրավունքի նորմերի և սկզբունքների և Կողմերի պետությունների ներպետական օրենսդրությունների համաձայն Կողմերի իրավասու մարմինները միմյանց աջակցություն կցուցաբերեն տեղեկատվության փոխանակման միջոցով, որը կանխատեսելիորեն կարևոր է Համաձայնագրով նախատեսված հարկերին առնչվող Կողմերի ներպետական օրենքներին վերաբերող վարչարարության և դրանց կիրառման համար:

2. Սույնի 1-ին պարբերությունում սահմանված տեղեկատվությունը կարող է պարունակել տեղեկություններ, որոնք կանխատեսելիորեն կարևոր են այդպիսի հարկերի հաշվարկման, գնահատման և հավաքագրման, հարկային հայցապահանջների վերականգնման և հարկադիր գանձման կամ հարկային հարցերի առնչությամբ հետախուզման կամ քրեական հետապնդման համար:

3. Տեղեկատվությունը կփոխանակվի սույն Համաձայնագրի դրույթների համաձայն և 8-րդ հոդվածով սահմանված կարգով կոնֆիդենցիալի որպես գաղտնի: Հարցվող կողմի օրենքներով, կանոնակարգերով և վարչարարական փորձով անձանց վերապահված իրավունքները և երաշխիքները կիրառելի կլինեն: Հարցվող կողմը կգործադրի լավագույն ջանքերը, որպեսզի ապահովվի, որ տեղեկատվության արդյունավետ փոխանակումը ենթակա չլինի անհիմն խոչընդոտների և հետաձգումների:

Հոդված 3

Իրավասություն

Հարցվող Կողմը պարտավորված չէ տրամադրել այնպիսի տեղեկատվություն, որը չի գտնվում իր մարմինների իրավասության շրջանակներում կամ դուրս է իր տարածքային իրավասության շրջանակներում գտնվող անձանց հսկողությունից կամ տիրապետումից:

Հոդված 4

Ընդգրկված հարկեր

1. Սույն Համաձայնագիրը տարածվում է հետևյալ հարկերի վրա.

ա) Հայաստանի Հանրապետության դեպքում՝

- i. Ավելացված արժեքի հարկ,
- ii. Ակցիզային հարկ,
- iii. Շահութահարկ,
- iv. Եկամտային հարկ,
- v. Գույքահարկ,
- vi. Հողի հարկ.

բ) Արգենտինայի Հանրապետության դեպքում՝

- i. Եկամտահարկ,
- ii. Ավելացված արժեքի հարկ,
- iii. Գույքահարկ,
- iv. Հաստատագրված նվազագույն եկամտի հարկ:

2. Սույն Համաձայնագիրը կկիրառվի նույնանման կամ նշանակալիորեն նման այլ հարկերի նկատմամբ, որոնք կնախատեսվեն Համաձայնագրի ստորագրումից հետո՝ ի լրումն գործող հարկերի կամ դրանց փոխարեն: Կողմերի իրավասու մարմինները միմյանց կձանուցեն Համաձայնագրի շրջանակներում հարկման և դրան առնչվող տեղեկատվության հավաքագրման մեթոդների փոփոխությունների վերաբերյալ:

3. Վերոնշյալ հարկերի վարչարարության համար տրամադրված տեղեկատվությունը կարող է կիրառվել այլ հարկերի նկատմամբ, որոնցով ստանձնվող պարտավորությունները կարող են սահմանվել ներպետական օրենսդրության հիման վրա հավաքագրված տեղեկատվության համաձայն:

Հոդված 5

Տեղեկատվության փոխանակում հարցման հիման վրա

1. Հարցվող Կողմի իրավասու մարմինը կտրամադրի տեղեկատվություն՝ մյուս Կողմի իրավասու մարմնի հարցման հիման վրա՝ սույնի 1-ին հոդվածում նշված նպատակների համար: Այդպիսի տեղեկատվությունը կփոխանակվի անկախ այն հանգամանքից, որ քննվող արարքը կարող էր հանցագործություն համարվել Հարցվող կողմի պետության օրենսդրության համաձայն, եթե այն տեղի ունեցած լիներ այդ պետության տարածքում:

2. Եթե Հարցվող Կողմի իրավասու մարմնի տիրապետման տակ գտնվող տեղեկատվությունը բավարար չէ տեղեկատվության հարցումը բավարարելու համար, այդ Կողմը, սույն Համաձայնագրի և իր պետության ներպետական օրենսդրության համաձայն, կօգտագործի տեղեկատվության հավաքագրման բոլոր համապատասխան միջոցները՝ Հարցող Կողմին հայցվող տեղեկատվությունը տրամադրելու նպատակով, բացառությամբ այն դեպքի, երբ Հարցվող Կողմը տեղեկացնում է, որ այլևս այդ տեղեկատվությունն անհրաժեշտ չէ:

3. Հարցող Կողմի իրավասու մարմնի հաստուկ հարցման դեպքում, սույն Հոդվածի դրույթների համաձայն Հարցվող Կողմի իրավասու մարմինը իր ներպետական օրենսդրությամբ նախատեսված թույլատրելիության շրջանակներում կտրամադրի տեղեկատվություն՝ վկաների ցուցմունքների և գրանցումների բնօրինակների հաստատված պատճենների տեսքով:

4. Յուրաքանչյուր Կողմ սույն Համաձայնագրի 1-ին հոդվածում նշված նպատակների համար անհրաժեշտ ջանքեր կգործադրի, որպեսզի ապահովի, որ իր իրավասու մարմինները, ներպետական օրենսդրությամբ նախատեսված թույլատրելիության շրջանակներում, հարցման հիման վրա իրավասու լինեն ձեռք բերել և տրամադրել.

ա) բանկերի, այլ ֆինանսական հաստատությունների, ինչպես նաև գործակալության աշխատողի կամ վստահված անձի կարգավիճակ ունեցող, այդ թվում նշանակված անձանց և լիազորված անձանց կողմից տիրապետվող տեղեկատվությունը,

բ) տեղեկատվություն՝ ընկերությունների, ընկերակցությունների, տրեստերի, հիմնադրամների և այլ անձանց պատկանելության վերաբերյալ, այդ թվում 3-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների համաձայն, սեփականության շրջայում ընդգրկված բոլոր այդպիսի անձանց պատկանելության վերաբերյալ տեղեկատվություն: Տրեստերի դեպքում՝ հիմնադիրների, վստահված անձանց և շահառուների մասին տեղեկատվություն, այդ թվում՝ այն անձանց, որոնց վստահված գույքի իրավունքը փոխանցվում է այդ վստահությունը լրանալուց հետո, և հիմնադրամների դեպքում՝ հիմնադիրների խորհրդի անդամների և շահառուների մասին տեղեկատվություն: Միաժամանակ, սույն

Համաձայնագիրը Կողմերին չի պարտավորեցնում հայթայթել և տրամադրել պատկանելության վերաբերյալ տեղեկատվություն՝ կապված հասարակական առևտրային կազմակերպությունների կամ կողակտիվ ներդրումային ֆոնդերի կամ ծրագրերի հետ, եթե այդպիսի տեղեկատվությունը կարող է ձեռք բերվել հանրային աղբյուրներից առանց անհամաչափ բարդությունների:

5. Հարցող Կողմի իրավասու մարմինը Համաձայնագրի շրջանակներում հարցման կատարման ժամանակ Հարցվող Կողմի մարմնի իրավասու մարմնին կտրամադրի հետևյալ տեղեկատվությունը՝ ուղղված տվյալ տեղեկատվության՝ հարցմանը համապատասխանության ապահովմանը.

- ա) գնման կամ հետախուզման տակ գտնվող անձի նույնականացման վերաբերյալ տեղեկատվություն,
- բ) հայտնաբերված տեղեկատվության հաստատումը, ներառյալ դրա բնույթը և ձևը, որով Հարցող Կողմը ցանկանում է ստանալ տեղեկատվությունը Հարցվող Կողմից,
- գ) հարկային նպատակը, որի համար տեղեկատվությունը հայթայթվում է,
- դ) հիմքեր, որոնք թույլ են տալիս կարծել, որ հարցվող տեղեկատվությունը առկա է Հարցվող Կողմում կամ գտնվում է Հարցվող Կողմի իրավասության շրջանակներում գտնվող անձի տիրապետման կամ հսկողության տակ,
- ե) Իրազեկվածության սահմաններում այն անձի անունը և հասցեն, որի տիրապետման տակ է հայցվող տեղեկատվությունը,
- զ) հայտարարություն այն մասին, որ հարցումը համապատասխանում է սույն Համաձայնագրին, Հարցող Կողմի պետության օրենսդրությանը և վարչարարական փորձին: Անհրաժեշտության դեպքում, Հարցող Կողմը կհայտնի, որ եթե պահանջվող տեղեկատվությունը գտնվեր իր պետության իրավագործության սահմաններում, ապա Հարցող Կողմի իրավասու մարմինը ունակ կլիներ իր պետության օրենքների համաձայն հայթայթել այդ տեղեկատվությունը,
- է) Հայտարարություն այն մասին, որ Հարցող Կողմը օգտագործել է իր պետության տարածքում առկա բոլոր միջոցները հայթայթելու տեղեկատվությունը, բացառությամբ այն միջոցների, որոնք կառաջացնեն անհամաչափ բարդություններ:

6. Հարցվող Կողմի իրավասու մարմինը կտրամադրի հայցվող տեղեկատվությունը Հարցող Կողմին հնարավորինս սեղմ ժամկետում: Արագ պատասխան ապահովելու նպատակով Հարցվող Կողմի իրավասու մարմինը.

- ա) Հարցող Կողմի իրավասու մարմնին գրավոր կերպով կհաստատի տեղեկատվության ստացումը և կձանուցի Հարցող Կողմի իրավասու մարմնին հարցման մեջ բավարար տեղեկատվության ներառված չլինելու մասին, այդպիսի խնդրի առկայության դեպքում հարցման ստացման օրվանից 60 (վաթսու) օրվա ընթացքում,
- բ) Հարցվող Կողմի իրավասու մարմինը, եթե հնարավորություն չի ունենում հայթայթել և տրամադրել տեղեկատվությունը հարցման ստացման օրվանից 90 (իննսու) օրվա ընթացքում, այդ թվում եթե տեղեկատվության տրամադրման գործում դժվարություններ են առաջ գալիս կամ հրաժարվում է տեղեկատվություն տրամադրել, ապա դրա մասին անմիջապես կտեղեկացնի Հարցող Կողմին՝ պարզաբանելով այդ տեղեկատվության տրամադրման անհնարինության պատճառները, դժվարությունների բնույթը կամ տեղեկատվության տրամադրումից հրաժարվելու պատճառները:

7. Հարցումները կարող են ներկայացվել գրավոր կերպով անգլերեն լեզվով և ցանկալի է ուղեկցվեն թարգմանությամբ՝ այդպիսի հարցում ստացող պետության պաշտոնական լեզվով: Հայերենով՝ Հայաստանի Հանրապետության դեպքում և իսպաներենով՝ Արգենտինայի Հանրապետության դեպքում: Հարցումները կարող են իրականացվել էլեկտրոնային միջոցներով:

Հոդված 6

Հարցող կողմի ներկայացուցիչների ներկայությունը Հարցվող կողմի պետության տարածքում

1. Առնվազն 10 (տասը) աշխատանքային օր առաջ Հարցվող Կողմին ներկայացված գրավոր ծանուցմամբ Հարցվող Կողմը կարող է թույլ տալ Հարցող Կողմի իրավասու մարմնի ներկայացուցիչներին ներկա գտնվել իր պետության տարածքում՝ հարցաքննելու անհատներին և ուսումնասիրելու գրանցումները՝ ներգրավված անձանց գրավոր թույլտվության հիման վրա: Հարցվող կողմի իրավասու մարմինը կձանուցի Հարցող Կողմի իրավասու մարմնին ներգրավված անհատների հետ հանդիպման ժամանակացույցի և վայրի մասին:

2. Հարցող Կողմի իրավասու մարմնի հարցմամբ, Հարցվող Կողմի իրավասու մարմինը կարող է թույլ տալ Հարցող Կողմի իրավասու մարմնի ներկայացուցիչներին ներկա գտնվել Հարցվող Կողմի համապատասխան մասում հարկային ստուգման նպատակով:

3. Եթե 2-րդ պարբերությունում նշված հարցումն ընդունելի է, ապա Հարցվող Կողմի ստուգումն իրականացնող իրավասու մարմինը, որքան հնարավոր է՝ շուտ կձանուցի Հարցող Կողմի իրավասու մարմնին ստուգման ժամանակի և վայրի, ստուգումն իրականացնող մարմնի կամ նշանակված ներկայացուցչի, ստուգման իրականացման

ընթացակարգերի և Հարցվող Կողմից պահանջվող պայմանները՝ ստուգման իրականացման համար: Հարկային ստուգման իրականացման վերաբերյալ բոլոր որոշումները կկայացվեն ստուգումն իրականացնող Հարցվող Կողմի կողմից:

**Հոդված 7
Հարցման մերժման հնարավորությունը**

1. Հարցվող Կողմից չի պահանջվի հայթայթել կամ տրամադրել տեղեկատվություն, որը Հարցող Կողմը իր ներքին օրենքների համաձայն ի վիճակի չի լինի հայթայթել՝ իր հարկային օրենքների վարչարարության կամ կիրառման նպատակների համար: Հարցվող Կողմի իրավասու մարմինը կարող է մերժել աջակցությունը, եթե հարցումը չի կատարվել սույն Համաձայնագրի կամ իր պետության ներպետական օրենսդրության համաձայն:

2. Սույն Համաձայնագրի դրույթները չեն կարող պարտավորեցնել Կողմին տրամադրելու այնպիսի տեղեկատվություն, որը կբացահայտի որևէ առևտրային, գործարար, արդյունաբերական, առևտրային կամ ծառայողական գաղտնիք կամ առևտրային գործընթաց: Անկախ վերոգրյալից՝ նշված 5-րդ հոդվածի 4-րդ պարբերությամբ սահմանված տեսակի տեղեկատվությունը չպետք է դիտարկվի որպես գաղտնիք կամ առևտրային գործընթաց, բացառապես այդ պարբերությամբ սահմանված չափանիշներին համապատասխանելու հիմքով:

3. Սույն Համաձայնագրի դրույթները չեն կարող պարտավորեցնել Կողմին հայթայթելու կամ տրամադրելու այնպիսի տեղեկատվություն, որը կբացահայտի գաղտնի հաղորդակցություն հաճախորդի և իրավաբանի, փաստաբանի կամ այլ իրավական ներկայացուցչի միջև, եթե այդպիսի հաղորդակցությունը՝
ա) առաջացել է իրավական օգնության տրամադրման շրջանակներում, կամ
բ) առաջացել է առկա կամ նախատեսվող իրավական ընթացակարգերի շրջանակներում:

4. Հարցվող Կողմը կարող է մերժել տեղեկատվության հարցումը, եթե տեղեկատվության տրամադրումը կհակասի հասարակական կարգին: Այդ դեպքում անհրաժեշտ կլինի ներկայացնել մերժման պատճառները:

5. Տեղեկատվության հարցումը չի կարող մերժվել այն հիմքով, որ հարկային հայցապահանջի հիման վրա գործը քննվում է, բացառությամբ այն դեպքի, երբ Հարցվող կողմը հիմնավորի, որ այդպիսի տեղեկատվության տրամադրումը բացասական ազդեցություն կունենա քննության ընթացքի վրա:

6. Հարցվող Կողմը կարող է մերժել տեղեկատվության հարցումը, եթե Հարցող Կողմի հայցվող տեղեկատվությունն ուղղված է Հարցող Կողմի հարկային օրենքի դրույթների կամ դրանց հետ կապված որևէ պահանջի կիրառմանը, որը խտրականություն է նախատեսում Հարցվող կողմի պետության քաղաքացու նկատմամբ՝ Հարցող կողմի նույն իրավիճակում գտնվող քաղաքացու համեմատությամբ:

**Հոդված 8
Գաղտնիություն**

Սույն Համաձայնագրի շրջանակներում Կողմերից յուրաքանչյուրի ստացած ցանկացած տեղեկատվությունը կդիտարկվի որպես գաղտնի, նույն պայմաններով, ինչ տվյալ պետության ներպետական օրենսդրության համաձայն ձեռք բերված տեղեկատվությունը կամ այդպիսի տեղեկատվություն տրամադրող Կողմի պետությունում կիրառվող գաղտնիության պայմանների համաձայն, եթե նշված պայմաններն ավելի խիստ են և կարող են տրամադրվել միայն Կողմի իրավասության շրջանակներում գտնվող այն անձանց կամ մարմիններին (ներառյալ դատարանները և վարչական մարմինները), որոնք առնչվում են Կողմի պետության սահմանած հարկի գնահատմանը կամ հավաքագրմանը, դրանց վերաբերյալ բողոքների քննմանը: Այդպիսի անձինք կամ մարմինները կօգտագործեն այդպիսի տեղեկատվությունը միայն այնպիսի հիմնավոր նպատակներով, որոնց համար տեղեկատվությունը պահանջված է: Նրանք կարող են տարածել տեղեկատվությունը միայն քաղաքացիական դատական գործընթացների ժամանակ կամ դատարանի որոշումներով: Տեղեկատվությունը չի կարող ներկայացվել ցանկացած այլ անձի, միավորի, մարմնի կամ ցանկացած այլ սուբյեկտի առանց Հարցվող Կողմի իրավասու մարմնի գրավոր համաձայնության:

**Հոդված 9
Ծախսեր**

Հարցվող Կողմը կկրի աջակցության տրամադրման հետ կապված ընթացիկ ծախսերը, իսկ Հարցող Կողմը կկրի աջակցության տրամադրման ընթացքում կրած արտակարգ ծախսերը (ներառյալ դատական գործընթացների առնչությամբ արտաքին խորհրդատուների ներգրավմամբ պայմանավորված ողջամիտ ծախսերը կամ այլ): Կողմերից մեկի խնդրանքով, իրավասու մարմինները անհրաժեշտության դեպքում կխորհրդակցեն սույն Հոդվածի վերաբերյալ և

մասնավորապես Հարցվող Կողմի իրավասու մարմինը նախօրոք կիրառվող Հարցող Կողմի իրավասու մարմնի հետ, եթե ենթադրվում է, որ որոշակի հարցման շրջանակներում տեղեկատվության տրամադրման ծախսերը նշանակալից կլինեն:

Հոդված 10

Փոխհամաձայնության ընթացակարգ

1. Համաձայնագրի կիրառման կամ մեկնաբանման ժամանակ առաջացած դժվարությունների կամ հակասությունների դեպքում, դրանք կլուծվեն Կողմերի իրավասու մարմինների միջև փոխհամաձայնությամբ՝ բանակցությունների և խորհրդակցությունների միջոցով:

2. Ի լրումն սույնի 1-ին պարբերությամբ նշված դրույթների, Կողմերի իրավասու մարմինները կարող են փոխհամաձայնության գալ 5-րդ և 6-րդ հոդվածներում նշված ընթացակարգերի վերաբերյալ:

3. Կողմերի իրավասու մարմինները կարող են ուղիղ հաղորդակցվել միմյանց հետ սույն Համաձայնագրով սահմանված փոխհամաձայնության ձեռքբերման նպատակով:

Հոդված 11

Ուժի մեջ մտնելը

1. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ կմտնի Կողմերի վերջին ծանուցման ստացմանը հաջորդող 30-րդ օրը, որով Կողմերը միմյանց ծանուցում են, որ Համաձայնագրի՝ ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ բոլոր ներպետական ընթացակարգերն ավարտվել են:

2. Սույն Համաձայնագիրը կկիրառվի.

ա) հարկային ոլորտի քրեական դեպքերի մասով՝ ուժի մեջ մտնելու օրվանից, այդ ամսաթվին կամ դրանից հետո սկսվող հարկային ժամանակաշրջանների նկատմամբ կամ եթե չկա հարկային ժամանակաշրջան՝ տվյալ ամսաթվին կամ դրանից հետո կատարված հարկային վճարումների նկատմամբ,

բ) 1-ին կետում նշված դեպքերից բացի այլ դեպքերի մասով՝ Համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող տարվա հունվարի առաջին օրը կամ դրանից հետո սկսվող հարկային ժամանակաշրջանի նկատմամբ կամ եթե չկա հարկային ժամանակաշրջան՝ Համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող տարվա հունվարի 1-ին կամ դրանից հետո կատարված հարկային վճարումների նկատմամբ:

3. Սույն Համաձայնագիրը կգործի անորոշ ժամկետով:

Հոդված 12

Գործողության դադարեցումը

1. Յուրաքանչյուր Կողմ կարող է դադարեցնել սույն Համաձայնագիրը մյուս Կողմին դադարեցման վերաբերյալ դիվանագիտական ուղիներով գրավոր ծանուցում ներկայացնելու միջոցով, օրացուցային տարվա ավարտին նախորդող առնվազն վեց (6) ամիս առաջ: Այդ դեպքում, սույն Համաձայնագիրը կդադարի գործել հաջորդ օրացուցային տարվա առաջին օրվանից:

2. Նույնիսկ սույն հոդվածի 1-ին պարբերության համաձայն Համաձայնագրի գործողության դադարեցումից հետո Կողմերը պարտավորված կլինեն սույն Համաձայնագրի 8-րդ հոդվածով սահմանված դրույթներով՝ սույն Համաձայնագրի շրջանակներում ձեռք բերված տեղեկատվության առնչությամբ:

Կատարվել Բուենոս Այրեսում 2014թ. հուլիսի 7-ին, երկու բնօրինակից, յուրաքանչյուրը՝ հայերեն, իսպաներեն և անգլերեն լեզուներով, ընդ որում բոլոր տեքստերը հավասարազոր են: Սույն Համաձայնագրի մեկնաբանման ընթացքում տարաձայնություններ առաջանալու դեպքում նախապատվությունը կտրվի անգլերեն լեզվով տեքստին:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2017թ. ապրիլի 28-ին: